«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2021Թ. ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/61

ք. Երևան «23» դեկտեմբերի 2021թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021թ. ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում

է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն

չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3	Ք.Երևան, Դ.Անհաղթ փ. 23/6, հ.5
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2473600002170010	Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 01569792
գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան	տնօրեն _____ Վ. Ղահակյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
« » դեկտեմբերի 2021 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/61 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79211160	2021թ. ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայության ձեռքբերման տեխնիկական բնութագիրը ներկայացված է Հավելված 1.1-ում	դրամ	9000000	1	ք.Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ. Թիվ 3	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու 20-րդ օրվանից հետո մինչև 2022 թ. ապրիլի 20-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ
Ք.Երևան, Դ.Անհաղթ փ. 23/6, հ.5
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792

տնօրեն ---------- Վ. Ասատակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« » դեկտեմբերի 2021 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/61 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵրՋԷԿ-ի հիմնական գործունեությունը ներառում է՝

- Էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի արտադրություն և վաճառք;
- Բնական գազի ներմուծում և էլեկտրական էներգիայի արտահանում:

ԵրՋԷԿ-ի գործունեությունը, ներառյալ սակագնային քաղաքականությունը, կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ԵրՋԷԿ-ի կողմից իրականացվում մեկ ծրագիր, որն ավարտվել է 30.07.2021թ.-ին .

Էներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման Ծրագիր (ՎԶՄԲ վարկային համաձայնագիր 8615-AM, արդյունքահենք ծրագիր, ստորագրված 2016թ. մայիսի 12-ին) Ծրագրի նպատակն էր սատարելու Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի մատակարարման համապատասխանության և հուսալիության պահպանման ջանքերը՝ էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով: Վարկը տրամադրված է ԵրՋԷԿ-ին և Հայաստանի ատոմային էլէկտրակայան ՓԲԸ-ին: ԵրՋԷԿ-ի գործունեության համար հատկացված վարկի գումարը կազմում է 21 092 210.81 ԱՄՆ դոլար:

ԵրՋԷԿ-ի աշխատողների միջին թվաքանակը 2021թ. ինն ամսվա ընթացքում կազմում է 183 մարդ:
ԵրՋԷԿ-ը գրանցված է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0053, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

1. Նպատակ

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնել Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն կազմված ԵրՋԷԿ-ի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ըստ ՖՀՄՍ 1-ի՝ ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է հետևյալ բաղադրիչները.
(ա) տարեվերջի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն,
(բ) տարվա կտրվածքով շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքների մասին հաշվետվություն,
(գ) տարվա կտրվածքով կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն,
(դ) տարվա կտրվածքով դրամական հոսքերի մասին հաշվետվություն,
(ե) հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ և
(զ) ամենամոտ համեմատելի ժամանակահատվածի սկզբի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, երբ ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառվում է հետադարձ կամ կազմակերպությունը վերանայում է նախկին ֆինանսական հաշվետվությունների հոդվածները կամ վերադասակարգում է նախկին ֆինանսական հաշվետվությունների հոդվածները:
ԵրՋԷԿ-ի հաշվապահական գրանցումները հանդիսանում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմք և կատարում են ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

Աուդիտորը պետք է նաև նշի, թե արդյոք ԵրՋԷԿ-ը կրել է ծախսեր, տվել կամ վերցրել է փոխառություններ, որոնք կապված չեն հիմնական գործունեության հետ, ինչպես սահմանված է Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի Վարկային համաձայնագրում և Համաշխարհային բանկի ԵրՋԷԿ-ին ուղղված P-for-R ծրագրի մասհանումների 12.05.2016թ. նամակում:Ընկերության հաշվապահական հաշվառման գրանցումները հանդիսանում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմք և կատարվում են գործարքների արտացոլման նպատակով:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պատասխանատվություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է ԵրՋԷԿ-ի ղեկավարությունը: Սա ներառում է բավարար հաշվապահական գրառումների վարումը և ներքին վերահսկողության ապահովումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառումը և ծրագրի ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս, աուդիտորը ղեկավարությունից պետք է պահանջի գրավոր հաստատում աուդիտի իրականացման հետ կապված աուդիտորին տրամադրված լիազորությունների վերաբերյալ:

3. Ծառայությունների ծավալ

Աուդիտը կիրականացվի համաձայն Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) Աուդիտի և հավաստիացման ստանդարտների միջազգային խորհրդի հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ): Այդ ստանդարտները պահանջում են, որպեսզի աուդիտորն աուդիտը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ստացվի բավարար հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները զուրկ են էական անճշտություններից: Աուդիտի ընթացքում ընտրանքային եղանակով ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն ու բացահայտումները հիմնավորող փաստերը: Աուդիտը ներառում է նաև օգտագործված հաշվապահական սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատականների գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

ԱՄՍ-ին համապատասխանությունն ապահովելու ընթացքում աուդիտորը հատկապես պետք է ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին, ներառյալ հանրային հատվածի կազմակերպություններին վերաբերող հատուկ նկատառումները.

ա) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 240-ի (ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ խարդախության դեպքերի հետ կապված աուդիտորի պարտականությունները)՝ աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում աուդիտի ռիսկը մինչև ընդունելի մակարդակը նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է հաշվի առնի խարդախության պատճառով ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած նշանակալից անճշտությունների ռիսկերը:

բ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 250-ի (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ օրենքների և օրենսդրական դաշտի պահանջների կատարումը)՝ աուդիտի գործընթացի պլանավորման և իրականացման, ինչպես նաև արդյունքների գնահատման և ներկայացման ժամանակ աուդիտորը պետք է հաշվի առնի, որը կառույցի կողմից օրենքների և կարգավորման դաշտի պահանջների չկատարումը կարող է էապես ազդել ֆինանսական հաշվետվությունների վրա:

գ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 260-ի (Ընկերության կառավարման համար պատասխանատուներին աուդիտի հետ կապված խնդիրների մասին հաղորդում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ընկերության կառավարման մարմնին պետք է տեղեկացնի կառավարչական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մասին;

դ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 265-ի (Կառավարման և ղեկավարման համար պատասխանատուներին ներքին հսկողության բացթողումների մասին տեղեկացում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ներքին հսկողության հայտնաբերված թերությունների մասին պետք է պատշաճ կերպով տեղեկացնի կառավարման և ղեկավարման համար պատասխանատուներին:

ե) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 330-ի (Աուդիտորի ընթացակարգերը գնահատված ռիսկերին արձագանքելիս)՝ Աուդիտի ռիսկն ընդունելի մակարդակի նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է որոշի իր արձագանքը ֆինանսական հաշվետվությունների մակարդակով գնահատված ռիսկերի նկատմամբ և պնդումների մակարդակով գնահատված ռիսկերին արձագանքելու նպատակով մշակի և իրականացնի աուդիտի լրացուցիչ ընթացակարգեր:

զ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 402-ի (Աուդիտի նկատառումները ծառայություններ մատուցող ընկերություն ներգրավված կառույցի վերաբերյալ)՝ այն դեպքերում, երբ տվյալ կառույցի գործառնությունների մի մասն իրականացնում է ծառայություններ մատուցող երրորդ կողմը, ապա աուդիտորը աուդիտի գործընթացի ժամանակ պետք է ներառի ծառայություններ մատուցող ընկերության ներքին հսկողության միջավայրին վերաբերող նկատառումներ և գնահատականներ:

է) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 580-ի (գրավոր ներկայացում)՝ որպես աուդիտի գործընթացի բաղկացուցիչ՝ աուդիտորը ընկերության ղեկավարությունից կամ, համապատասխան դեպքերում, կառավարող մարմնից պետք է ստանա աուդիտի փաստն արձանագրող նամակ:
ԵրՋԷԿ-ի ֆինանսական հաշվետվությունները պետք է առնվազն ներառեն նպատակը պարագրաֆում նշված բաղադրիչները:

4. Անկախ աուդիտորի եզրակացություն

Աուդիտորը պետք է տա աուդիտորական կարծիք ԵրՋԷԿ-ի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ նշելով, թե արդյոք այդ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ են ներկայացնում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերջի դրությամբ ֆինանսական վիճակը և տարիների ընթացքում գործունեության արդյունքները ՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հրապարակած Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Բացի Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքից աուդիտորը պետք է պատրաստի Նամակ ղեկավարությանը', որում աուդիտորը պետք է՝
ա) անի առաջարկություններ և դիտողություններ հաշվապահական գրանցումների, հաշվառման համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում,
բ) բացահայտի հաշվապահական հաշվառման համակարգերում և ներքին հսկողության մեխանիզմներում դիտված կոնկրետ թերություններն ու թույլ կողմերը և անի դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ,
գ) արձանագրի ֆինանսական համաձայնագր(եր)ի պայմանների չպահպանման դեպքերը,
դ) հաղորդի իրենց ուշադրությունը գրաված այն հարցերի վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ծրագրի իրականացման վրա,
ե) վարկառուի ուշադրությունը հրավիրի բոլոր մնացած այն խնդիրների վրա, որոնք աուդիտորի տեսանկյունից կարևոր են,
զ) տնօրինությանն ուղղված վերջնական նամակում ներառի տնօրինության մեկնաբանությունները:
Եթե վերոնշյալից և ոչ մեկը կիրառելի չէ, և դրա համար ղեկավարությանն ուղղված նամակ չի պատրաստվելու, աուդիտորը տալիս է նամակ, որով հաստատում է, որ աուդիտի ընթացքում ոչ մի այնպիսի բան չի գրավել նրանց ուշադրությունը, որ աուդիտորը համարում է կարևոր Վարկառուի ուշադրությանն արժանացնելու համար: ԵրՋԷԿ-ը պետք է ֆինանսական հաշվետվություններն, այդ թվում աուդիտորական կարծիքը և տնօրինությանն ուղղված նամակը, ստանա աուդիտ անցած ֆինանսական տարվա (կամ ժամանակահատվածի) ավարտից հետո ոչ ուշ քան 20.04.2022թ.: ԵրՋԷԿ-ը պարտավոր է դրանց երկու օրինակներ անհապաղ տրամադրել Համաշխարհային բանկին:

5. Տեղեկատվության հասանելիություն

Համաձայն 2010թ. հուլիսի 1-ի 'Տեղեկատվության հասանելիության վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականության', որ կիրառվում է Բանկի կողմից ֆինանսավորվող այն ծրագրերի համար, որոնց շուրջ բանակցելու հրավերներն ուղարկվել են 2010թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո, Բանկը պահանջում է, որ ԵրՋԷԿ-ը ժամանակին և Բանկի համար ընդունելի ձևով հրապարակի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները: Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունները ԵրՋԷԿ-ից պաշտոնապես ստանալուց հետո Բանկը հրապարակում է դրանք՝ համաձայն այս քաղաքականության:

Տնօրինությանն ուղղված նամակները, հատուկ աուդիտները (որոնք բնույթով ֆինանսական չեն) և աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները (օրինակ՝ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները) հրապարակման նպատակների համար չեն համարվում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների սահմանման մաս:
Միայն բացառիկ դեպքերում, այն է՝ երբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները պարունակում են մասնավոր կամ կոմերցիոն զգայուն տեղեկատվություն, Բանկը կարող է համաձայնել ազատել վարկառուին կամ ծրագիրն իրականացնող մարմնին աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը հրապարակելուց, սակայն պահանջել հրապարակել դրանց հակիրճ տարբերակը Բանկի համար ընդունելի ձևով: Բացառությունները հաստատվում են Համաշխարհային բանկի ղեկավարության կողմից:

6. Ընդհանուր

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն, այդ թվում համապատասխան կերպով հրապարակումը ԵրՋԷԿ-ի ղեկավարության պարտականությունն է: Որպես աուդիտի գործընթացի մաս, աուդիտորը ղեկավարությունից պետք է պահանջի գրավոր հաստատում աուդիտի իրականացման հետ կապված աուդիտորին տրամադրված լիազորությունների վերաբերյալ:

Աուդիտորն ունի անսահմանափակ հասանելիություն աուդիտի համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությանը, այդ թվում իրավաբանական փաստաթղթերին, ծրագրի նախապատրաստման և վերահսկողության հաշվետվություններին, ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություններին, նամակագրությանը, վարկի հաշվի վերաբերյալ տեղեկատվությանը: Աուդիտորն իրավունք ունի է նաև ստանալու գրավոր հաստատում մասհանված գումարների և ըստ Բանկի մատյանների մնացորդի վերաբերյալ:
Ներգրավվածության այս պայմանը կմնա ուժի մեջ հետագա ֆինանսական տարիների համար, եթե չվերացվի, չփոփոխվի կամ չդադարեցվի:
Աուդիտորը պետք է հասկանա, որ Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակում աշխատանքային փաստաթղթերը կարող են ենթարկվել Բանկի լիազորված անձնակազմի կողմից ուսումնասիրման:

7. Այլ պայմաններ

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված «Էներգետիկական ոլորտի առողջացման ծրագիր» 8615-AM Վարկային համաձայնագրի Ցանկ 2, Բաժին III, կետ B.ii-ի աուդիտը պետք է իրականացվի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից ընդունելի աուդիտորի կողմից՝ այն է, այն աուդիտորի կողմից, որը ընդգրկված է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի Իրավասու աուդիտորական կազմակերպությունների ցանկում.
1.Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում :
2.Մասնակիցը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ մատուցելու լիցենզիա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ
Ք.Երևան, Դ.Անհաղթ փ. 23/6, հ.5
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792

տնօրեն _____ Վ. Մելիքյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« » դեկտեմբերի 2021թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/61 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-2022թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
1	79211160	2021թ. ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայության	Վճարումը կկատարվի ծառայությունը մատուցելուց հետո ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում	Ընդամենը 100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ
Ք.Երևան, Դ.Անհաղթ փ. 23/6, հ.5
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792

տնօրեն ---------- Վ. Մահակյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » դեկտեմբերի 2021թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/61 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » նոյեմբերի 2021թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/61 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն